

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/5

21 մայիսի 2013թ.

Քննարկվեց <Աշոտ Հովհաննիսյան> ՍՊԸ 07.05.2013 թ-ի գրությամբ բերված բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ 10.04.2013 թ-ի թիվ 1002828 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 31.08.2012թ. թիվ 1002828 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Աշոտ Հովհաննիսյան> ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ 10.04.2013 թ-ի թիվ 1002828 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 43.918.786 դրամ: Ստուգման ակտի դեմ <Աշոտ Հովհաննիսյան> ՍՊԸ 07.05.2013 թ-ի գրությամբ բերվել է բողոք:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով <Աշոտ Հովհաննիսյան> ՍՊԸ ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Բողոքի քննարկման ընթացքում պարզվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ պետի կողմից ստուգման ակտը և կից փաստաթղթերը ուղարկվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչություն՝ ստուգման ակտով արձանագրված գործողություններում հանցակազմի առկայությունը պարզելու նպատակով:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի համաձայն. <Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը>:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ <Աշոտ Հովհաննիսյան> ՍՊԸ գործով ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում նյութեր են նախապատրաստվում, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ <Աշոտ Հովհաննիսյան> ՍՊԸ բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

<Աշոտ Հովհաննիսյան> ՍՊԸ 07.05.2013 թ-ի գրությամբ բերված բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ